

դրեւով, պիտի ըսեմ կարծել, կեղծել, կասկածել՝ երեքն ալ միևնոյն բառին պարզապէս երեք ձեւերն են, և իրենց համապատասխանող օտար բառերն ալ արմատակից։ Կը վախեմ որ մի՛ գուցէ այս կարծիքը ամենչն կեղծը համարուի յաշս Տօքթ. Գարբիչեանի։ Այսուհանդերձ կարծիքներու կամ կեղծիքներու մէջ ամենչն ընտրելին այն պէտք է նկատուի, որ զամէնքն ալ կը միացնէ, կը հաշտեցնէ։ Թէ այս մասին Տօքթ. Գարբիչեան ինձի պիտի համաժայնի, կասկած չունիմ։

Հ. Ն. Աւարունեան

### ՍԻՍԱԿԱՆ ԱՆՈՒԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒԽԻՆԸ

առ չանդէս Ամսօրեայ

Պոռֆ. Հիւազման «Հին Հայոց տեղույ անունները» ուսումնասիրած ժամանակ՝ կը խօսի նաև Սիսականի վրայ. (Հանդէս Ամսօրեայ, 1905 էջ 57):

Սիսէիք անունն ծագումն անյայտ է իրեն. «թէ անունն սկզբնաբար ժողովրդեան անուն էր թէ երկրին և թէ ուսկից յառաջ կու զայ, չենք զիտեր»։ — Խնդհակառակն նիկոլավի իր «Անդրկովկասի բեւուազրութեանց» մէջ արդէն մատնանշած է որ ուրարտական և յունական ձեռվ Սուսանիա կոչուած զաւառը իր անունը ստացած էր Գեղամայ լճակէն. Սուսանիա կը նշանակէ աւազան, Ուրարտացւոց բարբառով։

Խակ Սիսականի համար՝ Հիւազման կը զրէ. «Անունն կ ենթազրէ միջնն պարակերէն Սիսական մը որ կրնայ թերես Սիսէ (Ժնագոյն Սես?) մը յառաջ եկած ըլլալ՝ վրան ակած մասնկան աւելնալովր... բայց որովհետև Սիսական նախ տոհմանուն է, ուսի հաւանական է որ Սիսակ յատուկ անունն և «ան» մասնիկէն կազմուած հայրանունական անոն մըլլայ և «Սիսական, Սիսակի ցեղէ» նշանակէ։ Այս պարապէս խորենացւոց Սիսակեան ցեղը

Սիսակ անունով նախնիէ մը համարիլ՝ լեզուի տեսակետէ հիմ ունի, թէպէտե այս նախնին առասպեկտական է, և խորենացին Սիսական անունն մղուած կ'երեւայ Սիսակ մը ենթազրելու։ Վասն զի Մովսէս առհմանուններէ մղուելով նախնիներ գտնելու մէջ շատ ճարտար է։

Հիւազման Սիս անունը նկատած չէ իրը հիմ Սիս-ալիս անուած՝ որովհետև «տոհմանուն» մ'է սա։ Այս եզրակացութենչն պիտի զգուշանար նա անշուշտ՝ եթէ զիտնար որ Սիս անծանօթ չէ Հայոց Պատմութեան. յիրաւի Անտիպատրոս, թագաւոր փոքր Հայոց, ժամանակակից Միհրդատ Եւպատորի, էր որդի Սիսիս թագաւորի (Սոր, Ժի. 3). յունական վերջաւորութիւնը (որ կը ներկայանայ նաև Արտաւագդոս, Արդուատէս, այլ անուանց մէջ մէկդի զնելով՝ կ'ունենանը Սիս։

Այս անունը կրող հայ իշխանազուն մը պէտք է տուած ըլլայ Սիսականի՝ իր յորչորջումը (Սիս քաղաքին ալ?)։ — Բայց կարելի է Փոքր Հայրէ իշխանութիւնը՝ Սիսական ցեղի հետ յարաբերութեան մէջ դնել։

Կրնայ առարկուիլ նախ՝ Փոքր Հայրէ և Սիսականի հնաւորութիւնը. բայց պէտք է նկատել որ Խաղաղից Վանին մինչև Պոնտոս փոխազրուած կը գտնենք, Մամիկոնեանցը՝ Տայրէն Տարօն։

Սիսնից միշտ ինքնավարութեան կը ձգտին, Վասակի մէջ թագավահանջ մը կը ներկայացնեն. պէտք է արքայական ծագման ազդեցութիւնը ենթազրել այս ծրատումին մէջ։

Դրապէս կարելի չէ ապացուցանել պատմական ազերս մը՝ Փոքր Հայրէ և Սիսական նահանգի միջն. — Բայց Սիս անուած զոյութիւնը բաւական է մեզ Սիսականի «տոհմանուն» ըլլաւը եզրակացնելու համար։

Տ. Ա.

